

'ի կալուածս եւ 'ի կարասիս վանաց : Գրեցաւ հրովարտակ
ըստ խնդրոյ նոցին , ՎՊՂ (1667) :

Իբրեւ եաես Եղիազար թէ ա'ս զՊատրիարքութիւն
Երուսաղէմի Աստուածատուր եպիսկոպոս , յուզի անկեալ
չօքաւ 'ի Կոստանդինուպօլիս , եւ անտի դիմեաց առ Քէօպ-
րիւլիւ Եպարքոսն , եւ յայտ արար նմա թէ Պատրիարքու-
թիւնն եւ խնամակալութիւնն Երուսաղէմի յառաջագոյն
հրովարտակաւ հաստատեալ էր 'ի վերայ իւր , եւ չէր օրէն
'ի կենդանութեան իւրոյ՝ սալ զիշխանութիւնն զայն այ-
լում : զի Աստուածատուր եպիսկոպոս խարէյութեամբ
էաւ յինէն զՊատրիարքութիւնն , եւ հասոյց ինձ վնաս
ասէ՝ եւ մեծամեծ չարիս : Այլ արդ՝ բարձցի յաթուոյն՝
ձերով հրամանաւ Աստուածատուր , եւ վերստին շնորհեացի
ինձ Պատրիարքութիւնն եւ Կաթուղիկոսութիւնն Երուսաղէ-
մի ըստ առաջնոյն . եւ 'ի կենդանութեան խնում , մի ոք հա-
մարձակեացի ձեռն մխել յայն : Եւ այսպիսի եղանակաւ
վերստին հաստատեաց Եղիազար զիշխանութիւնն Երու-
սաղէմի հրովարտակաւ , եւ եկեալ նստաւ անդ Պատրիարք
եւ Կաթուղիկոս անուամբ . ՎՊՂ (1668) : Եւ Մարտիրոս
վարդապետ ոչ կարացեալ կալ յայնստիկ կողմանս , ել եւ
գնաց 'ի Կոստանդինուպօլիս :

Եւ եղև 'ի մեռանիլ Քէօպրիւլիւ Մէհէմէտ Փաշայի՝
կարգեցաւ Վէզիր մեծ որդի նորին Ահմէտ Փաշա : Մար-
տիրոս վարդապետ միաբանեալ ընդ իւր զոմանս յառաջին
գործակցաց իւրոց , դիմեաց մեծամեծ ընծայիւք առ Եպար-
քոսն , որ էր յԱդրիանուպօլիս , եւ մատուցեալ զիր ամբաս-
տանութեան 'ի վերայ Եղիազարու՝ չարախօս եղև զնմանէ ,
թէ առանց թագաւորական հրամանի չինեալ իցէ բազում
չինուածս յեկեղեցիս եւ 'ի վանօրայս յԵրուսաղէմ , եւ 'ի մօ-
տակայ տեղիս , եւ էաւ հրաման՝ զի ինքն լիցի վերստին
Պատրիարք Երուսաղէմի :

Եւ դարձ արարեալ 'ի Կոստանդինուպօլիս , ծանուցու-
մըն արար յեկեղեցիս , թէ նոր Եպարքոսն յիմ կողմն է ,
եւ ինձ ետ զիշխանութիւնն հովուելոյ զամենեւին , որք են
ընդ Տէրութեամբ Օսմանցւոց , եւ զի ցայն վայր յանուն
Եղիազարու տային ժողովուրդք նուէրս Երուսաղէմի , ջա-
նաց ինքն հաւաքել յանուն իւր , եւ կորզեաց ինչ ինչ յո-